



TK&PARTNERS
WEEKLY CLIENT ALERT N 28

1. Խորհրդարանական նախագծեր
2. Ֆինանսական ոլորտ
3. Մինաս Ավետիսյան

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ


ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ

Ազգային ժողովում շրջանառվում է նախագիծ, որով խստացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված վիրավորանքի ու զրպարտության համար փոխհատուցման չափը:

Նախագծով նախատեսվում է փոխհատուցման սահմանաչափերը բարձրացնել մինչև 5,000,000 ՀՀ դրամ վիրավորանքի և 10,000,000 ՀՀ դրամ զրպարտության համար: Որոշ վերլուծաբաններ սա համարում են քաղաքական նկատառումներով ընդունվող օրենք:

Նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ:

Ավելին՝ [հղումով](#)



#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՒՆՍԱԴՐՈՒՅՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

2021թ. փետրվարի 2-ի նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ այն սահմանելով 5.5%:

Ավելին՝ [հղումով](#)

ԲՈՆՈՒՄ-ՄԱՆՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Այսուհետ այն դեպքերում, երբ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովադիրը հանդիսանում է կանոնավոր, ինչպես նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով լիցենզավորված ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ կազմակերպություն, այդպիսի ապահովադիրների նկատմամբ այլևս չի կիրառվի ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների բոնուս-մալուս համակարգը: Փոխարենը, այդ համակարգը կկիրառվի ավտոտրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ բացառապես իր վարորդական պատմության և իրեն սեփականության իրավունքով պատկանող ավտոտրանսպորտային միջոցների մասով, ինչը թույլ կտա պաշտպանել բարեխիղճ տնտեսավարողներին վարորդների մեղքով տեղի ունեցող վթարների արդյունքում իրենց

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

մալուսային դասեր շնորհելուց: «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացում կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողով է ներկայացվել սույն թվականի փետրվարի 11-ին «Բարգավաճ Հայաստան» խմբակցության մի խումբ պատգամավորների կողմից:

Ավելին՝ [հղումով](#)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՐԳՆԵՐԻ ԳԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ

Քաղաքացիների հետ ավանդի պայմանագրերի կնքող բանկերը, ինչպես նաև վարկեր տրամադրող բանկերը և այլ ֆինանսական կազմակերպություններն օրենքի խախտման համար այսուհետ կարող են ենթարկվել ավելի խիստ տուգանքների՝ 300,000-ից 500,000 ՀՀ դրամի չափով՝ 365 օրվա ընթացքում մեկ խախտում թույլ տալու դեպքում, 500,000-ից 1,000,000 ՀՀ դրամի չափով՝ 365 օրվա ընթացքում երկու խախտում թույլ տալու դեպքում և 1,000,000-ից 2,000,000 ՀՀ դրամի չափով՝ 365 օրվա ընթացքում երեք կամ ավելի խախտում թույլ տալու դեպքում: «Բանկային ավանդների ներգրավման մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքներում փոփոխությունների կատարելու վերաբերյալ օրենքների նախագծերը սույն թվականի փետրվարի 11-ին ընդունվել են առաջին ընթացմամբ:

Ավելին հղումներով՝ [հղում](#), [հղում](#) և [հղում](#)



ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS



Մինաս Ավետիսյանը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ կերպարվեստի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկն է: Ծնվել է 1928 թվականի հուլիսի 20-ին, Ջաջուռում: Համեմատաբար ուշ է սկսել զբաղվել գեղանկարչությամբ: Պատանի հասակում տարված է եղել Մարտիրոս Սարյանի արվեստով: Առաջին անգամ նկարչի հետ ծանոթացել է 18 տարեկանում: Մինասի գեղարվեստական և էսթետական զարգացման գործում մեծ ազդեցություն են ունեցել Հայկական մանրանկարչությունը և իտալական վերածննդի նկարչությունը, որին ծանոթացել է Սանկտ Պետերբուրգում ուսանելու տարիներին:

Մինասը ստեղծել է հայկական գյուղաշխարհին արտացոլող կոմպոզիցիաներ, բնանկարներ, ինչպես նաև դիմանկարներ, նատյուրմորտներ, որմնանկարներ: Մինասի ստեղծագործությունները յուրահատուկ են իրենց գունային ուժեղ հակադրություններով, որոնք արտահայտում են լուսավոր, քնարական տրամադրություններ, երբեմն՝ ողբերգական շեշտերով: Անդրադարձել է նկարչության բոլոր ոլորտներին՝ գեղանկարչություն, գրաֆիկա, որմնանկարչություն, բեմանկարչություն և այլն:

Մինասի հասուն ստեղծագործական կյանքը տևել է 15 տարի՝ 1960–1975 թվականներին, որի ընթացքում նկարիչը ստեղծել է մոտ հինգ հարյուր մեծ ու փոքր կտավ, մոտավորապես նույնքան գծանկար, քսան մեծածավալ որմնանկար, մեկ տասնյակից ավելի բալետային ու թատերական ձևավորումներ:

1975 Փետրվարի 16-ին Մինասը Երևանում ենթարկվում է ավտովթարի: Վախճանվում է մեկ շաբաթ անց՝ փետրվարի 23-ին:

[Աղբյուրը](#)

